# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ԱՁ Ռիտա Գասպարյան -ն ՍՄՍԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/10 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 77 | ԱԲԱԿՏԵՐԻԼ | ԱԲԱԿՏԵՐԻԼ | ԱԲԱԿՏԵՐԻԼ | Ռուդեզ | Հակաբակտերիալ հեղուկ ախտահանող միջոց հանդիսացող երկկոմպոնենտ խտանյութ է, պիտանելիության ժամկետը՝ ոչ պակաս 3 տարի, աշխատանքային պատրաստի լուծույթի պիտանելիությունը՝ ոչ պակաս 12 օր, նախատեսված է բազմակի օգտագործման համար: Որպես ազդող նյութ պետք է պարունակի Ն,Ն-բիս (3-ամինապրոպիլ) դոդեցիլամին՝ ոչ պակաս 3 %, ՉԱՄ՝ ոչ պակաս 22 % : 1 լիտր խտանյութի համար միջոցը պետք է ունենա 25 հատ թեստավորման |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | շերտածողիկներ՝ աշխատանքային լուծույթների պիտանելիության ստուգման համար: Միջոցը պետք է օժտված լինի հակամանրէային ակտիվությամբ տարբեր գրամբացասական և գրամդրական մանրէների նկատմամբ, այդ թվում տուբերկուլոզի և ներհիվանդանոցային վարակների հարուցիչների, Կանդիդա սնկերի, վիրուսների՝ այդ թվում պոլիոմիելիտի, հեպատիտների, մարդու իմունային անբավարարության վարակի վիրուսի ( ՄԻԱՎ), ադենովիրուսների նկատմամբ, պետք է օժտված լինի նաև լվացող հատկությամբ: Միջոցը պետք է նախատեսված լինի կանխարգելիչ, ընթացիկ, եզրափակիչ ախտահանման, հիմնական մաքրում իրականացնելու համար՝ մանրէային վարակների ժամանակ, ինչպես նաև բոլոր տեսակների մակերեսների լվացման և ախտահանման համար՝ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հիմնարկներում, դեղագործական, դեղատնային և այլ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | կազմակերպություններում, գիտական, փորձագիտական լաբորատորիաներում: Միջոցի կիրառումից հետո միջոցի աշխատանքային լուծույթը մակերեսների վրայից լվանալու անհրաժեշտություն չպետք է լինի: Միջոցը պետք է նախատեսված լինի բժշկական նշանակության արտադրատեսակների (ներառյալ վիրաբուժական և ատամնաբուժական, այդ թվում՝ պտտվող բժշկական նշանակության իրեր, ճկուն և կոշտ էնդոսկոպներ) ախտահանման և նախամանրէազերծման մշակման համար, այդ թվում՝ համակցված մեկ գործընթացում, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում , այդ թվում՝ մանկական և նեոնատոլոգիական բաժանմունքներում, վարակիչ հիվանդությունների օջախներում սենքերի, կոշտ գույքի, կահավորանքի պարագաների մակերեսների, սարքերի և սարքավորումների, սանիտարա- |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | տեխնիկական սարքավորումների մակերեսների, սպիտակեղենի, սպասքի (այդ թվում` լաբորատոր), հիվանդի խնամքի պարագաների, սանիտարական փոխադրամիջոցի ախտահանման և լվացման համար, մանրէային ծագումնաբանությամբ վարակների ժամանակ ախտահանման համար: Միջոցը պետք է ունենա ՀՀ ԱՆ կողմից հաստատված կիրառման մեթոդական հրահանգ: Միջոցի կիրառումը` համաձայն մեթոդական հրահանգի: Մատակարարման պահին ապրանքի պիտանիության ժամկետի 2/3-ի առկայություն: Ուշադրություն` չափի միավոր գրված <<լիտր>>-ը հասկանալ որպես 1 լիտր խտանյութ + 25 շերտածողիկ: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ИП Рита Гаспарян в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՍՄՍԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/10 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 77 | | | | | |